

## **2. Աշտարակ համայնքի լուսավորության համակարգի վերազինման, արդիականացման աշխատանքների իրականացում**

Աշտարակ համայնքն իր աշխարհագրական դիրքով գտնվում է հանրապետության 2 խոշոր քաղաքների ճանապարհային հանգույցում, ինչպես նաև հանդիսանում է դեպի օդանավակայան տանող տարանցիկ ճանապարհ:

Համայնքի բյուջեի միջոցներով կառուցվել է լուսավորության համակարգ, որն ավելի շարունակ է ցանցի, քան համակարգի: Փողոցներում լուսավորությունը տեղադրվել են հին, խորհրդային տարիներից մնացած հենասյուների, այլ ծառայությունների համար նախատեսված հենասյուների վրա: Վերջին տարիներին հիմնավոր համակարգ ստեղծվել է Երևանյան փողոցի մի հատվածում, որը հանդիսանում է Երևանից-Աշտարակ մուտքի հատվածը, Ն.Աշտարակեցու հրապարակը, հին շուկայի տարածքում կառուցված պտրակում և քաղաքային զբոսայգու մի հատվածում:

Նպատակ ունենալով Աշտարակը դարձնել տուրիստական կենտրոն, անհրաժեշտություն է նաև ապահովել Վանաձոր-Աշտարակ, Գյումրի-Աշտարակ, Էջմիածին-Աշտարակ մուտքերից դեպի քաղաքի թաղամասեր ձգվող լուսավորության համակարգի արդիականացումն ու վերազինումը, ինչպես նաև որոշ թաղամասերում և փողոցներում իրականացնել նոր համակարգերի ձևավորումը:

Փողոցների և բազմաբնակարան շենքերի ընտրությունը բացի վերոգրյալից, կատարվել է մի քանի չափորոշիչներով՝

1. Պատմամշակութային հուշարձանների առկայություն
2. Տուրիստական երթուղիներում ներգրավվածություն
3. Գիշերակացի, հանգստի գոտիների, ժամանցի վայրերի առկայություն
4. Համայնքի բնակչության առավել խիտ բնակեցված լինելու փաստ
5. Սոցիալապես անապահով մեծաքանակ ընտանիքների առկայություն
6. Տարբեր թաղամասերում, բնակելի շենքերում և բնակավայրերում բնակչության շարժի դինամիկա
7. և այլն:

Կարևորվել է նաև համայնքի տարբեր հատվածներն իրար կապող հանգույցների անցանելիության և հարմարավետության ապահովումը, ինչպես նաև երեկոյան ժամերին անվտանգ տեղաշարժի հնարավորությունը:

Համայնքի մյուս փողոցներում նախատեսվում է նաև հին լուսավորությունը փոխարինել LED էներգախնայող լուսավորությունով:

Ընդհանուր առմամբ նախատեսվում է մոտ 12 կմ երկարությամբ լուսավորության համակարգի վերազինում, արդիականացում և կառուցում:

Նախատեսվում է լուսավորության համակարգի վերազինում, արդիականացում և կառուցում իրականացնել Աղյուսակ 1-ում նշված փողոցներում:

**Աղյուսակ 1**

	<b>Փողոցներ</b>	<b>Երկարություն /մ/</b>	<b>Լուսավորության քանակ /հապ/</b>	<b>Տեղադրվող հենասյուների քանակ /հապ/</b>
1	Ղազար Փարպեցու փողոց, Ներսես Աշտարակեցու փողոց	1900	63	63
2	Սմբատ Շահազիզի փողոց,	600	20	20

	Պողոտային փողոց			
3	Վարդգես Պետրոսյանի փողոց, Գրիգոր Նարեկացու փողոց	1950	65	65
4	Գրիգոր Նարեկացու փողոց Տիգրան Մեծի փողոց, Արտակի փողոց, Ալիխանյան փողոց, 6-րդ փողոց	3000	100	80
5	Տիգրան Մեծի փողոցից 30 շենք տանող փողոցից 48-րդ փողոց	1200	40	40
6	Արամ Մանուկյան	1450	50	50

Նախատեսվում է նաև վերոնշյալ փողոցներում վերանորոգել լուսավորության համակարգը, հին լուսատուները փոխարինել LED-լույսերով:

Նշված փողոցներում հողային գրունտները հիմնականում ապահովված են ամրությամբ և կայունությամբ, որի համար էլ լուսավորության համակարգի նախագծման փուլի, նախագծահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջների, հետազննման, անհրաժեշտ փորձաքննության և այլ լրացուցիչ համաձայնեցումների անհրաժեշտություն չկա:

Փողոցներում լուսավորության համակարգի վերանորոգման, վերազինման, հին համակարգերի վերականգնման, որոշ հատվածներում կառուցման նպատակով իրականացվելու են հետևյալ աշխատանքները՝

- Այն փողոցներում, բակերում և թաղամասերում, որտեղ առկա է լուսավորության հին համակարգը՝ հենասյուներ, լուսատուներ և այլն, իրականացնել համակարգի արդիականացում, մասնավորապես՝ լուսավորության մոդելավորում:
- Նոր համակարգի կառուցման անհրաժեշտություն ունեցող փողոցներում, բակերում, թաղամասերում նոր համակարգի մոդելավորում, հենասյուների ճանապարհի մեկ կողմից տեղադրելու ընտրությամբ (ճանապարհի լուսավորության դասը և նորմավորվող սահմանները ըստ ՀՀՇՆ 22-03-2017)
- Վերոնշյալ փողոցներում և տարածքներում հին ցանցի ապամոնտաժում հենասյուներով և լուսատուներով:
- Նոր հենասյուների տեղադրում մինչև 2 մ խորությամբ բետոնյա հիմքերի մեջ
- Լուսավորության համակարգի անցկացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներով մալուխների, մեկուսիչների, ապահովիչների տեղադրմամբ:
- Փողոցների լուսավորության համակարգի վրա տեղադրել ժամային միացման ցուցիչներ
- Լուսատուները պետք է լինեն էներգախնայող LED տիպի
- Հենասյան երկարությունը պետք է լինի 8մ, իսկ թևնակը 1.70մ

*Ծրագրի արժեքը 157.000.000 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրում՝ 78.500.000 ՀՀ դրամ*

*Կատարման ժամկետը՝ 6 ամիս*